

## **ԳՐԱԲԱՐԻ ՈՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՃՆԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ**

**Վ. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու*

Ինչպես հատուկ է գրաբարյան երկերին առհասարակ, Օճնեցու երկերում ևս գործածական են ոճական այնպիսի միջոցներ, հնարանքներ, ինչպիսիք են ավելադրությունը, պեսպիսությունը, վերացականը թանձրականի իմաստով գործածելը:

1. Նույնանիշ և հոմանիշ բառերի ավելադրությունները, ինչպես նշում է Ա. Աբրահամյանը, «գործածվում են գրվածքի ոճին զարդարանք տալու, իսկ առանձին դեպքերում էլ իմաստային որոշ նրբություններ տալու համար»<sup>1</sup>: Դրանք լինում են երկու տեսակ՝ գոյական անունների (ավելադրություն, որ սովորաբար արտահայտվում է սեռական հոլովով) և բայական (ավելադրություն, որն իր հերթին կարող է արտահայտվել դիմավոր կամ դերբայական ձևերով): Դեռևս 5-6-րդ դարերի պատմիչների երկերից կարելի է նշել ավելադրությունների բազմաթիվ օրինակներ: Այս հնարանքն իր տարբեր դրսևորումներով որոշակի տեղ է գտել նաև Հովհաննես Օճնեցու երկերում: Սրանցում գերակշռում են բայական ավելադրությունները՝ դիմավոր կամ անդեմ բայերով արտահայտված:

ա) Դերբայական ավելադրություններ են գործածված հետևյալ նախադասություններում, ինչպես՝ «Հնչեաց գլիողն և ուժգին աղաղակել ըստ հրամանին» («Սակս գիշերային ժամու», 110)<sup>2</sup>, որտեղ *հնչեաց* դիմավոր բայի հետ գործածվել է նրան հոմանիշ *աղաղակել* անորոշ դերբայաձևը: «...սպունգ ինչ թացեալ, այնպէս լգեալ ուռճանայր» («Ատենաբանութիւն», 2)<sup>3</sup>, «...այլ համարձակաբար երկոքումբքս այսոքիւք բարեփառութեամբ դամպարօք փայլեալք պայծառանային երկուս ըստ բնութեան, եւ մի ըստ միաւորութեան Քրիստոս քարոզելով» («Ընդդէմ երեւութականաց», 71)<sup>4</sup>, «Վասն որոյ գիր արարեալ Բաբգէն, սահման կապելով, թէ իւ պատրեալ խաբեսցեն զձեզ բանք դոցա» (Սակս ժողովոց որ եղեն ի Հայք, 474)<sup>5</sup>, «...եւ անորոշաբար կանոնաւ վասն երկուց բնութեանցն միաւորելով զմիութիւն ունելով սրբեցին դարձեալ զխաչեցարն» (նույն տեղում, 475), «...եւ այսու խոտորեցուցեն զվիճակս Հայոց, որպէս երբեմն ի ձեռն Եզրի սփռեալ տարածեցաւ» (նույն տեղում, 413), «Ըստ նմին օրինակի և առ փրկչական մարմինն վերաթևեալ համբարձցիս. դաւանելով զնա տեսակի անուամբ՝

<sup>1</sup> **Ա. Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 394:

<sup>2</sup> Յովհաննու Օճնեցոյ Մատենագրութիւնք, «Սակս գիշերային ժամու», Վենետիկ, 1833, էջ 109-114:

<sup>3</sup> Նույն տեղում, «Ատենաբանութիւն», էջ 1-33:

<sup>4</sup> Յովհաննու Օճնեցոյ Մատենագրութիւնք, «Ընդդէմ երեւութականաց», Վենետիկ, 1953, էջ 61-97:

<sup>5</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք», էջ 473-493:

մարդ Յիսուս Քրիստոս ասելով» («Ընդդէմ երեւութականաց», 71), «...զի կարկե-  
ալ փակեցի աղանդ երկաբնակացն» («Սակս ժողովոց որ եղեն ի Յայք», 490) և  
այլն: Նշված նախադասություններում որպես դերբայական ավելադրություններ  
հանդես են եկել լցեալ, փայլեալք, պատրեալ, զմիութիւն ունելով, սփռեալ, վե-  
րաթևեալ և կարկեալ բայածները: Ինչպես հին և միջնադարյան մատենագրու-  
թյան մեջ ընդհանրապես, այնպես էլ նշված երկերում գերակշռում են անցյալ  
դերբայով բայական ավելադրությունները, թեև քիչ չեն նաև անորոշով գործա-  
ծությունները:

բ) Կան նաև օրինակներ, որոնցում ավելադրությունները դիմավոր ձևերով են  
արտահայտված, ինչպես՝ «...և գայր հասանէր մեզ ի թիկունս հանդերձ Յարբ և  
Յոզուով սրբով» («Սակս ժողովոց որ եղեն ի Յայք», 477) և այլն:

գ) Երբեմն հանդիպում են նաև գոյականի սեռականով ավելադրություններ,  
ինչպես՝ «...զի մի սարդեալ մուծցի ի ներքս չար աղանդն հերծուածոյն Քաղկե-  
դոնի, որ սփռեալ տարածեալ էր ընդ բոլոր Յայք» (նույն տեղում, 490):

2. Ոճական հետաքրքրական հնարանք է պեսպիսությունը, որի դեպքում  
միևնույն իմաստը կրկնվում է տարբեր՝ հոմանիշ կամ նույնանիշ բառերով<sup>6</sup>: Այս  
հնարանքը ևս իր որոշակի դրսևորումն է ստացել Օձնեցու երկերում:

Որպես կանոն՝ գործածված երկրորդ հոմանիշ բառը իմաստային սաստկու-  
թյամբ տարբերվում է նախորդից: Այսպես՝ «Ատենաբանութիւն» երկում գործած-  
ված է հետևյալ նախադասությունը. «Ննջեցե՛ք այսուհետև, ասէ, և հանգերուք»  
(էջ 17), որտեղ ննջեցեք և հանգերուք հրամայական եղանակի բայերը ձևավորել  
են ոճական նշված հնարանքը: Կամ՝ «Եւ փոփոխեցին զտուրբ հաւատն զկարգու  
տաւնից, զոր եղ սուրբն Յակովբոս՝ եղբայրն Տեառն եւ այլայլեցին զաստուածա-  
բանութիւնսն Քրիստոսի» («Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յով-  
հաննու Վերծանաւղի», 107)<sup>7</sup> նախադասության մեջ, անշուշտ, փոփոխեցին և այ-  
լայլեցին բայերը տարբեր իմաստային նրբերանգներով յուրահատուկ երանգա-  
վորում են հաղորդում խոսքին: Այլ օրինակներ՝ «Ընդէ՞ր գարհուրիս և գայրա-  
նաս, և այլանդակ և հայիոյիչ շարադրութեամբ զբարեպաշտաց պղտորես զլսե-  
լիս» («Ընդդէմ երեւութականաց», 67), «Որով իւիք աւասիկ ես այժմիկ հարկանեմ  
զանձն իմ և նուաստանամ» («Ատենաբանութիւն», 3): Այստեղ ունենք նաև հոմա-  
նիշ մակբայների գործածութիւն (աւասիկ և այժմիկ): Նույնպիսի կիրառությամբ  
են հանդես եկել հաւանութիւն և հաւատ գոյականները հետևյալ օրինակում.  
«...հարկ է հաւանութեամբ և հաւատովք հետևել զկնի բոլոր քրիստոսակա-  
նացս» (նույն տեղում, 6):

3. Ոճական նշված հնարանքներից, թերևս, ամենաբնորոշը և գործածականը  
վերացականը թանձրացականի իմաստով գործածելն է, որը մասամբ հունաբան  
հայերենի ազդեցության հետևանք է<sup>8</sup>: Այս հնարը սովորաբար դրսևորվում է ածա-

<sup>6</sup> Տե՛ս **Ա. Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 94:

<sup>7</sup> **Ալեքսան Յակոբեան**, Յովհան Օձնեցու նորայայտ տօնացոյցային երկը՝ «Նախահաւա-  
քումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի», «Յանդէս ամսօրեայ», թիվ 1-12,  
Երևան-Վիեննա, 2006, էջ 92-130:

<sup>8</sup> **Յովհաննէս Օձնեցի**, Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրու-  
թյունները Վազգեն Յամբարձումյանի, Երևան, 1999, էջ 257, ծան. 1:

կանը –*ուրիւն* ածանցով գոյականի վերածելով, որը, սակայն, թարգմանելիս դուրս է հանվում: Փաստորեն գրաբար և աշխարհաբար նույն ենթատեքստում այս կառույցը մեկ որպես հատկացուցիչ- հատկացյալի շարահյուսական դեր ունի, մեկ էլ՝ որոշիչ-որոշյալի:

Օձնեցու երկերում բազմիցս հանդիպում են նաև այս կարգի կառույցներ, ինչպես՝ «Քանզի արդարև զարդարի *պատկերս առաքինութեան* երանգովք՝ ըստ նախատպին կերպարանեալ» («Ատենաբանութիւն», 2), թարգմանվում է՝ «առաքինի պատկեր», «Սա է *անմահութեան պտղոյն* պտղաբերիչ» (նույն տեղում, 14), «Ձի մի՛ *արմատ դարձութեան* ի վեր երևեալ նեղիցէ» («Ատենաբանութիւն», Կանոնք, 33), «Այսպես ի ներքս ի խորոջ անդ *զմիտս ամբարշտութեան* ցուցեալ՝ յափշտակեն զտկարս գիտութեամբ ի հրապուրանս բանից արկանելով...» («Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս», 192)<sup>9</sup>, «Ձի և սուրբ հարքն՝ *քարեկառութեան* հիմնացեալ *հաւատով*, աներկևան և անտարակարծ խոհականութեամբ զէն անվթարելի զերկոսին զսոսա ընդ ինքեանս բարձեալ բերէին պիտոյիցն իրակութեան» («Ընդդէմ երեւութականաց», 70) և այլն:

Իբրև ամփոփում՝ նշենք, որ Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն ընդհանուր առմամբ աչքի չի ընկնում քերականական և ոճական բնույթի շեղումներով: Գործածական են ոճական այնպիսի հնարներ, ինչպիսիք են ավելադրությունը, պեսպիսությունը, վերացականը թանձրացականի իմաստով գործածելը: Սրանցից վերջինը, թերևս, ամենից կենսունակն է ուսումնասիրվող երկերում:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
2. **Ա. Յակոբեան**, Յովհանն Օձնեցու նորայայտ տօնացոյցային երկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի», «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-2, Երևան-Վիեննա, 2006:
3. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:
4. Յովհաննու Օձնեցու Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:
5. Յովհաննու Օձնեցու Մատենագրութիւնք, Վենետիկ, 1953:
6. **Հովհաննես Օձնեցի**, Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Ե., 1999:

#### ВЫРАЖЕНИЕ НЕКОТОРЫХ СТИЛИСТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ ГРАБАРА В ТРУДАХ ОВАНЕСА ОДЗНЕЦИ

*В. А. Нерсисян*

В данном исследовании рассмотрены некоторые стилистические особенности грабара, которые обнаружены в трудах Ованеса Одзнецца.

<sup>9</sup> Յովհաննու Իմաստասիրի, Հայոց կաթողիկոսի, («Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս», «Արարատ» 1896, էջ 192-197) :

**THE REFLECTION OF SOME STYLISTIC PECULARITIES OF GRABAR IN THE  
WORKS HOVHANNES ODZNETSI**

*V. A. Nersisyan*

Several stylistic peculiarities in the works of Hovhannes Odznetsi are studied in the research paper.

**ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ  
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ  
ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

**Ռ. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ**  
*ԳՊՀ լաբորանտ*

Արտաքին փոխակերպումը նախադասությունների փոխակերպումն է գոյականական, ածականական, մակբայական բառաձևերի և բառակապակցությունների, որոնք մտնում են բառակապակցությունների և նախադասությունների կազմի մեջ: Նախադասությունների արտաքին փոխակերպման դեպքերն են՝

1. հարաբերական դերանունների և շաղկապների միջոցով նախադասության փոխակերպումը որևէ գործառույթով հանդես եկող ստորադաս նախադասության,

2. նախադասության վերածում դերբայական դարձվածի կամ դերբայական անդամի,

3. հնարավոր դերբայական դարձվածի դերբայի զեղչում, և նախադասության վերածում գոյականական բառակապակցության,

4. նախադասության վերածում բայանվանական գոյականի և ածականի,

5. նախադասության վերածում բաղադրյալ և հատկապես բարդ գոյականի, ածականի և մակբայի, որոնք կատարում են միևնույն պաշտոնները:

Սույն հոդվածում կփորձենք ուսումնասիրել 1-ին և 2-րդ դեպքերը՝ ուսումնասիրելով նպատակի պարագա երկրորդական նախադասությունների հնարավոր փոխակերպման (ման դերբայական դարձված /անդամ/ -երկրորդական նախադասություն) լեզվաոճական արժեքը:

Ոճական նկատառումներից ելնելով՝ փոխակերպումը իր տարբեր տեսակներով գալիս է սեղմելու, ավելի ընդգրկուն դարձնելու խոսքը, ազատելու այն երկարաբանությունից, կրճատելու երկրորդական նախադասությունների /եթ դրանք շատ են և բազմաբնույթ/ քանակը: Իհարկե, բոլոր դեպքերում նախադասությունների մեջ խոսողը ինչ-որ բան է մղում առաջին պլան՝ ցանկանալով ընդգծել կամ խոսակցի ուշադրությունը հրավիրել այս կամ այն, իմաստային կենտրոն հանդիսացող բառի վրա, և ելնելով խոսքի նպատակադրումից՝ կառուցվում է նախադասության տվյալ տարբերակը, որը հաճախ ավելի հաջողված է, քան նրա փոխակերպված, իմաստային առումով համարժեք տարբերակը: